ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N3241 - Ա **23 ապրիլի 2009թ.**

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-Ի Հ. 3531-Ա, ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4-Ի Հ. 3973-Ա, ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի Հ. 6164-Ա, 2009 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի Հ. 1097-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի «Հողի և ունեցվածքի գործառնություններ» ՓԲԸ 18.03.2009թ. հ.20/2-Ե/135 գրությունը.

1. Երևանի քաղաքապետի 2008 թվականի հուլիսի 31-ի «Կենտրոն համայնքի Նորագյուղ հ.56/4 բնակելի տան նկատմամբ Վարդիթեր Սեդրակյանի և Մանուկ Հմայակյանի գույքային իրավունքները վերականգնելու մասին» հ.3531-Ա որոշման.

1) նախաբանի առաջին պարբերությունում «Հաշվի առնելով» բառերից հետո լրացնել «, որ շինությունը կառուցվել է մինչև 2001 թվականը,» բառերը և թիվը.

2) 1-ին կետում «Վարդիթեր» անունից հետո լրացնել «Լիպարիտի» անունը, «Մանուկ» անունից հետո լրացնել «Մերուժանի» անունը, իսկ «Հմայակյանի» ազգանունից հետո լրացնել (համապատասխանաբար ծնված՝ 16.05.1959թ., 11.05.1986թ.)» բառերը և թվերը։

2. Երևանի քաղաքապետի 2008 թվականի սեպտեմբերի 4-ի «Կենտրոն համայնքի Խորենացու 2-րդ նրբանցքի հ.96/27 բնակելի տան նկատմամբ Քնարիկ Սարգսյանի, Իռմա Բաղդասարյանի և Բելլա Նիկողոսյանի գույքային իրավունքները վերականգնելու մասին» հ.3531-Ա որոշման.

1) նախաբանի առաջին պարբերությունում «Հաշվի առնելով» բառերից հետո լրացնել «, որ շինությունը կառուցվել է մինչև 2001 թվականը,» բառերը և թիվը.

2) 1-ին կետում «Քնարիկ» անունից հետո լրացնել «Սերգոյի» անունը, «Իռմա» անունից հետո լրացնել «Ալեքսանդրի» անունը, «Բելլա» անունից հետո լրացնել «Մարատի» անունը, իսկ «Նիկողոսյանի» ազգանունից հետո լրացնել (համապատասխանաբար ծնված՝ 04.01.1933թ., 11.07.1967թ., 30.09.1987թ.)» բառերը և թվերը.

3) վերնագրում, նախաբանում, 1-ին և 4-րդ կետերում «96/27» թիվը փոխարինել «96/37» թվով։

3. Երևանի քաղաքապետի 2008 թվականի դեկտեմբերի 22-ի «Երևանի քաղաքապետի 2005 թվականի ապրիլի 20-ի հ.834-Ա որոշման 4-րդ հավելվածը մասնակի չեղյալ ճանաչելու, Արղության փողոցի հ.18 բնակելի տանը կից հողամասի և շենք-շինությունների նկատմամբ Կարեն Մարտիրոսի Ծուղունյանի, Աիդա Մարտիրոսի Ծուղունյանի գույքային իրավունքները վերականգնելու մասին» հ.6164-Ա որոշման վերնագրում, 2-րդ և 8-րդ կետերում «Աիդա Մարտիրոսի Ծուղունյանի» անունից հետո լրացնել «,Կարինե Մարկոսի Մաղաքյանի, Գուրգեն Լորիկի Գյուլումյանի, Երջանիկ Հայկազի Բալայանի, Ռաֆայել

Կոնսուլի Ղարիբյանի, Աղվան Կոնսուլի Ղարիբյանի» անունները, իսկ նախաբանի առաջին պարբերությունում՝ «Կարինե Մարկոսի Մաղաքյանի (ծնված՝ 14.06.1971թ.), Գուրգեն Լորիկի Գյուլումյանի (ծնված՝ 26.01.1960թ.), Երջանիկ Հայկազի Բալայանի (ծնված՝ 27.12.1939թ.), Ռաֆայել Կոնսուլի Ղարիբյանի (ծնված՝ 29.05.1951թ.), Աղվան Կոնսուլի Ղարիբյանի (ծնված՝ 01.01.1948թ.)» անունները և թվերը։

4. Երևանի քաղաքապետի 2009 թվականի փետրվարի 27-ի «Հաղթանակի 5-րդ փողոցի հ.33/2 հասցեի բնակելի տանը կից հողամասի և շենք-շինությունների նկատմամբ Վեմիր Արմենակի Պետրոսյանի, Սերգեյ Գուրգենի Գրիգորյանի գույքային իրավունքները վերականգնելու մասին» հ.1097-Ա որոշման վերնագրում, 1-ին և 5-րդ կետերում «Գրիգորյանի» ազգանունից հետո լրացնել «Սաթիկ Արշավիրի Սանդրոյանի» անունը, իսկ նախաբանի առաջին պարբերությունում՝ «Սաթիկ Արշավիրի Սանդրոյանի (ծնված՝ 01.10.1943թ.)» անունը և թվերը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
Գ.ԲԵԳԼԱՐՅԱՆ